ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 27 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 18-Ի N 664-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝

1. Հայաստանի Հանրապետության վարչապետի 2021 թվականի հունիսի 18-ի «Դուբայ ԷՔՍՊՈ-2020» համաշխարհային ցուցահանդեսին Հայաստանի Հանրապետության մասնակցության միջոցառումների ծրագիրը, ժամանակացույցը և ծախսերի ֆինանսական գնահատականը հաստատելու մասին» N 664-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխություններն ու լրացումները՝

1) որոշման N 1 հավելվածի «Ծրագրի ֆինանսավորումը» գլխում «650 մլն դրամ» բառերը փոխարինել «834.7 մլն դրամ» բառերով.

2) որոշման N 2 հավելվածի՝

ա. աղյուսակը «Գործընկերների կողմից սննդի տրամադրման վերահսկողություն/մոնիթորինգ» պարբերությունից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությամբ.

«	Դուբայ ԷՔՍՊՈ-2020-ի հայկական տաղավարի ներքին կառուցապատման և շինարարական աշխատանքների իրականացում	09/07/21	30/09/21

»,

բ. աղյուսակից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությամբ.

«Սահմանված ժամանակացույցը նախնական է և կարող է փոփոխվել՝ պայմանավորված միջոցառումների իրականացման գործընթացների անհրաժեշտությամբ, բայց ոչ ուշ, քան մինչև 2022 թվականի մայիսի 31-ը:».

3) որոշման N 3 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

14.01.2022
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ